Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.11.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝ ՊԼ-063

Խախտում՝

1. «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ պաշտոնատար անձ Հրաչյա Պողոսյանի կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը, մրցակից թիմի ներկայացուցիչների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 9, 1.2 և 1.4 ենթակետեր)
2. «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ պաշտոնատար անձ Աշոտ Բեգլարյանի կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը, մրցակից թիմի ներկայացուցիչների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 9, 1.2 և 1.4 ենթակետեր)
3. «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզչի օգնական Արտակ Օսեյանի (2080) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը, մրցակից թիմի ներկայացուցիչների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 9, 1.2 և 1.4 ենթակետեր)
4. «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Ջոնաթան Ալեքսանդր Դուարտե Դուրանի (43865) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքը (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
5. Խաղի ժամանակահատվածում «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ անվտանգության աշխատակիցների ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելը (Հավելված 1 Ա, 34-րդ կետ)

Առաջնություն՝ Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա

Խաղ՝ «Արարատ-Արմենիա»-«Նոա», 28.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.5 ենթակետով և 6-րդ կետով՝ 3 ամիս 10 օր ժամկետով կասեցնել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ պաշտոնատար անձ Հրաչյա Պողոսյանի՝ հանդերձարաններ մտնելու իրավունքը, պատվավոր հյուրերի (VIP) առանձնացված գոտում գտնվելու իրավունքը և տեխնիկական գոտում գտնվելու իրավունքը։

   Հրահանգ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի՝

   Պատասխանատվության միջոցը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա և Հայաստանի Առաջին խմբի առաջնության հանդիպումների վրա։

2. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.5 ենթակետով և 6-րդ կետով՝ 3 ամիս 10 օր ժամկետով կասեցնել «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ պաշտոնատար անձ Աշոտ Բեգլարյանի՝ հանդերձարաններ մտնելու իրավունքը, պատվավոր հյուրերի (VIP) առանձնացված գոտում գտնվելու իրավունքը և տեխնիկական գոտում գտնվելու իրավունքը։

   Հրահանգ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի՝

   Պատասխանատվության միջոցը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա և Հայաստանի Առաջին խմբի առաջնության հանդիպումների վրա։

3. «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզչի օգնական Արտակ Օսեյանին (2080) զրկել ծառայողական պարտականություններն իրականացնելու իրավունքից 3 (երեք) խաղով։

   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 2 (երկու) խաղը, պայմանականորեն չկիրառել։ «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզչի օգնական Արտակ Օսեյանի (2080) նկատմամբ փորձաշրջան սահմանել 1 (մեկ) ամիս ժամկետով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ։

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150,000 ՀՀ դրամի չափով:

4. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Ջոնաթան Ալեքսանդր Դուարտե Դուրանի (43865) նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

   Նկատողություն ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:

5. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

   Նկատողություն ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:

- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: